Հայաստանի Հանրապետություն /Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ

Զբոսաշրջության և մարզային ենթակառուցվածքների բարելավման ծրագիր (P504282)

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ (ԲՍՀՊ) (P504282)

Բանակցված տարբերակ

06 Մարտ 2025

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

1. Վարկային Համաձայնագրի և Ծրագրի համաձայնագրի («Համաձայնագրեր») համաձայն ՀՀ կառավարության («Վարկառու») կողմից իրականացվելու է Զբոսաշրջության և մարզային ենթակառուցվածքների բարելավման ծրագիր՝ («Ծրագիր») Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի(«Ծրագրի իրականացման գրասենյակ» կամ ԾԻԳ) ներգրավմամբ: Ինչպես սահմանված է Վարկային և Ծրագրի համաձայնագրերում (Համաձայնագրեր), Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը (Բանկը) համաձայնություն է հայտնել ապահովել Ծրագրի ֆինանսավորումը:

2. Վարկառուն պետք է ապահովի, որ Ծրագիրն իրականացվի ինչպես Բնապահպանական և սոցիալական ստանդարտների (ԲՍՍ) այնպես էլ սույն Բնապահպանական և սոցիալական հանձնառությունների պլանի (ԲՍՀՊ) Բանկի պահանջներին համապատասխան: ԲՍՀՊ-ն կազմում է համաձայնագրերի մաս: Եթե սույն փաստաթղթում այլ բան սահմանված չէ, Համաձայնագրերում հապավումների համար առկա են իրենց սահմանումները:

3. Սույն ԲՍՀՊ-ով սահմանվում են նյութական միջոցները և գործողությունները, որոնք կամ իրականացվելու են Վարկառուի կողմից կամ Վարկառուն նպաստելու է դրանց իրականացմանը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում, սահմանելու է դրանց համապատասխան ժամկետները, ինչպիսիք են ինստիտուցիոնալ, կադրային, ուսուցման, մոնիտորինգի և հաշվետվությունների կազմակերպում և բողոքների կառավարում: ԲՍՀՊ-ն նաև սահմանում է բնապահպանական և սոցիալական (ԲՍ) փաստաթղթերը, որոնք պետք է պատրաստվեն կամ թարմացվեն, իրականացվեն խորհրդակցություններ, հրապարակվեն և իրականացվեն Ծրագրի շրջանակներում Բանկի համար ընդունելի ձևով՝ համահունչ ԲՍՍ-ներին: Նշված ԲՍ փաստաթղթերը կարող են ժամանակ առ ժամանակ վերանայվել Բանկի կողմից՝ նախնական գրավոր համաձայնությամբ: Ինչպես նախատեսված է նշված Համաձայնագրով, Վարկառուն պետք է ապահովի բավարար միջոցների առկայությունը՝ ԲՍՀՊ-ի իրականացման ծախսերը հոգալու համար:

4. Ըստ Բանկի և Վարկառուի միջև պայմանվորվածության, սույն ԲՍՀՊ-ն ժամանակ առ ժամանակ ըստ անհրաժեշտության կվերանայվի, որպեսզի ներառվեն և արտացոլեն Ծրագրում իրականացված կամ չնախատեսված հանգամանքներով պայմանավորված փոփոխությունները՝ ըստ Ծրագրի պահանջների: Այս պարագայում Բանկը և Վարկառուն ըստ պայմանավորվածության թարմացնում են ԲՍՀՊ-ն, որպեսզի այս փոփոխությունները արտացոլվեն Վարկային Համաձայնագրում, Բանկի և Վարկային Համաձայնագրում նշված Վարկառուի ներկայացուցչի կամ Ծրագրի իրականացման կազմակերպության ներկայացուցչի միջև գրավոր հաստատված նամակագրությամբ: Թարմացված ԲՍՀՊ-ն պետք է սեղմ ժամկետում հրապարկվի Վարկառուի կողմից: .

5. Ստորև բերված <<Իրականացման պատրաստականության ցուցիչներ>> ենթաբաժինը սահմանում է այն գործողություններն ու միջոցառումները, որոնք պետք

է մշտադիտարկվեն՝ գնահատելու համար Ծրագրի պատրաստականությունը՝ սույն ԲՍՀՊ-ին համապատասխան: Այնուամենայնիվ, սույն ԲՍՀՊ-ի բոլոր գործողություններն ու միջոցառումները պետք է իրականացվեն այնպես, ինչպես նշված է ստորև նշված «Ժամանակացույց» սյունակում, անկախ նրանից, թե դրանք առկա են նշված ենթաբաժնում:

Նյութական միջոցներ և գործողություններ		Ժամանակացույց	Պատասխանատու մարմին
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒՄ			
Ա	**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ** ա) ԾԻԳ-ի կազմում ապահովել Բնապահպանական և Սոցիալական ստորաբաժանման առկայություն, համապատասխան որակավորում ունեցող անձնակազմով և ռեսուրսներով(ներառյալ՝ բնապահպանական և սոցիալական մասնագետներ), որը պատասխանատու է բնապահպանական և սոցիալական խնդիրների կառավարման համար և որոնք կաջակցեն ծրագրի բնապահպանական, սոցիալական, առողջության և անվտանգության (ԲՍ) ռիսկերի և ազդեցությունների կառավարմանը,: բ) Վարձել կամ նշանակել Տարաբնակեցման մասնագետ կամ Խորհրդատու՝ աջակցելու Գյումրու շուկայի վերականգնման տարաբնակեցման ազդեցության կառավարմանը:	Ա. Նշանակել մեկ բնապահպանական մասնագետ և մեկ սոցիալական մասնագետ ոչ ուշ քան մեկնարկից 15 օր հետո, պահպանելով այս հաստիքները Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում»: Բ. Վարձել կամ նշանակել մեկ տարաբնակեցման մասնագետ կամ խորհրդատու մինչև Գյումրու շուկայի վերականգնման համար տարաբնակեցման պլանի (ՏՊ) մեկնարկը, պահպանելով այդ պաշտոնը ՏՊ-ի իրականացման ողջ ընթացքում:	**ԾԻԳ**

Բ	Կարողությունների զարգացման ծրագիրը Պատրաստել, ընդունել և իրականացնել կարողությունների զարգացման ծրագիրը(ԿԶԾ) որպես Ղեկավար Ձեռնարկի (ՂՁ) մասը, ներառելով բայց ոչ սահմանափակելով վերապատրաստումները՝ • ԾԻԳ-ի աշխատակիցների, շահակիրների, համայնքների և Ծրագրի աշխատողների, ինչպես սահմանված է Ծրագրի աշխատանքի կառավարման ընթացակարգում (ԱԿԸ) Համաշխարհային բանկի բնապահպանական և սոցիալական շրջանակների և ԲՍՍ պահանջների հետ կապված, շահակիրների հայտնաբերման և ներգրավմանը, Ծրագրի բնապահպանական և սոցիալական ռիսկերի գնահատման, կառավարման, համայնքի առողջության և անվտանգության ապահովման, արտակարգ իրավիճակներին պատրաստվածության և արձագանքին, ինչպես նաև Ծրագրի հետադարձ կապի բողոքների հասցեագրման մեխանիզմի (ՀԿԲՀՄ) : • ԾԻԳ-ի աշխատակիցների, այլ ներգրավված շահակիրների և տեղական ինքնակառավարման մարմինների համար՝ ըստ Ծրագրի տարաբնակեցման շրջանակի(ՏՇ): • ԾԻԳ-ի աշխատակիցների և նախագծի աշխատակիցների համար աշխատանքային կառավարման ընթացակարգերի, ներառյալ աշխատողների բողոքների մեխանիզմի և սեռական շահագործում և բռնություն / Սեռական ոտնձգությունների կանխարգելման միջոցների վերաբերյալ: • Կապալառուների, ենթակապալառուների և տեխնիկական հսկիչների համար՝ Ծրագրի Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատումներ (ԲՍԱԳ), Բնապահպանական և սոցիալական գնահատում (ԲՍԳ), Բնապահպանական կառավարման պլան (ԲՍԿՊ), Տարաբնակեցման պլաններ (ՏՊ), Մշակութային ժառանգության կառավարման պլան (ՄԺԿՊ) և Աշխատանքային առողջության և անվտանգության (ԱԱԱ) մոնիտորինգի և հաշվետվությունների վերաբերյալ»:	«Պատրաստել ԿԶԾ Ծրագրի մեկնարկի ամսաթվից առաջ և այնուհետև իրականացնել պլանը Ծրագրի իրականացման ընթացքում»:	**ԾԻԳ**
«ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ»			
Գ	**ԿԱՆՈՆԱՎՈՐ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ** Պատրաստել և ներկայացնել Բանկին կանոնավոր կերպով մշտադիտարկման հաշվետվություններ՝ ծրագրի ԲՍ կատարողականի վերաբերյալ Հաշվետվությունները պետք է ներառեն.	Բանկին ներկայացնել կանոնակարգված կիսամյակային հաշվետվություններ որպես Ծրագրի	**ԾԻԳ**

	• Ըստ ԲՍՀՊ-ի ԲՍ փաստաթղթերի պատրաստման և իրականացման կարգավիճակը: • Ակտիվ շահակիրների մասնակցության գործունեության համառոտ նկարագրություն՝ ըստ Շահակիրների Ներգրավման Պլանի(ՇՆՊ): • ԲՀՄ ներկայացված և գրանցամատյանում արձանագրված բողոքները, դրանց լուծման մեջ ձեռք բերված առաջընթացը: • Կապալառուների և ենթակապալառուների ԲՍ հաշվետվությունը, որն ամփոփված է կապալառուների և տեխնիկական հսկողության ընկերությունների հաշվետվություններում: • Ստորև բերված Ե - ենթակետի գործողությունների շրջանակներում հաղորդված միջադեպերի և պատահարների թվի և դրանց լուծման կարգավիճակը: • Տարաբնակեցման պլանների (ՎՊ) պատրաստման և իրականացման կարգավիճակը: • ԿՀՊ-ի իրականացմանն ուղղված առաջընթացը: • ԱԿԸ-ի իրականացման կարգավիճակը:	հաշվետվությունների մաս, Ծրագրի իրականացման ընթացքում, սկսած ուժի մեջ մտնելու ամսաթվից: Յուրաքանչյուր հաշվետվություն պետք է ներկայացվի Բանկին ոչ ուշ, քան յուրաքանչյուր հաշվետու ժամանակահատվածի ավարտից 45 օր հետո:	
Դ	**ԿԱՊԱԼԱՌՈՒՆԵՐԻ ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ** Պահանջել կապալառուներից և տեխսկողության ընկերություններից ներկայացնել ամսական ԲՍ կատարողականի մշտադիտարկման հաշվետվություններ՝ մրցութային փաստաթղթերում և պայմանագրերում նախատեսված չափանիշներին համապատասխան, և փոխանցել այդ հաշվետվությունները Բանկին:	Ներկայացնել ամսական հաշվետվությունները Բանկին՝ ըստ պահանջի:	ԾԻԳ
Ե	**ՄԻՋԱԴԵՊԵՐ և ՊԱՏԱՀԱՐՆԵՐ** Տեղեկացնել Բանկին Ծրագրին առնչվող ցանկացած միջադեպի կամ պատահարի մասին, որը կարող է կամ հավանական է, որ ունենա էական բացասական ազդեցություն շրջակա միջավայրի, ազդակիր համայնքների, հանրության կամ աշխատողների վրա, ինչպես նաև աշխատողների կամ հանրության մահվան կամ լուրջ վնասվածքների հետևանքով առաջացած դեպքերը, բռնության, խտրականության կամ բողոքի ակտերը, մշակութային ժառանգության կամ կենսաբազմազանության ռեսուրսների վրա անսպասելի ազդեցությունները, շրջակա միջավայրի աղտոտումը, ամբարտակի խափանումը, հարկադրական կամ մանկական աշխատանքը, տեղահանում առանց պատշաճ իրավական ընթացակարգի (հարկադիր վտարում), սեռական	Տեղեկացնել Բանկին միջադեպի կամ պատահարի մասին ոչ ուշ, քան 48 ժամ հետո: Բանկի պահանջին համապատասխան տրամադրել առկա մանրամասները: Միջադեպի կամ պատահարի վերաբերյալ ուսումնասիրության հաշվետվությունը և ՈՒԳՊ	ԾԻԳ

	շահագործման կամ բռնության (ՍՇԲ) կամ սեռական ոտնձգության (ՍՈ) մեղադրանքներ, կամ հիվանդությունների բռնկումներ: Բանկի պահանջով ներկայացնել մանրամասներ՝ միջադեպի կամ պատահարի վերաբերյալ: Կազմակերպել միջադեպի կամ պատահարի համապատասխան ուսումնասիրություն՝ դրա անմիջական, խորքային և հիմնական պատճառները պարզելու համար: Պատրաստել և համաձայնեցնել Բանկի հետ ուղղիչ գործողությունների պլան, որտեղ կներկայացվեն այն միջոցառումները և գործողությունները, որոնք պետք է ձեռնարկվեն միջադեպը կամ պատահարը լուծելու համար ինչպես նաև կանխելու դրա կրկնությունը:	ներկայացնել Բանկին ոչ ուշ, քան 10 աշխատանքային օր անց նախնական ծանուցումը ներկայացնելուց հետո, եթե Բանկի կողմից այլ ժամկետներ գրավոր կերպով չեն համաձայնեցվել:	
ԲՍՍ 1: ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ՈՒ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ			
1.1	**ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ ԵՎ/կամ ՊԼԱՆՆԵՐ** 1. Պատրաստել և իրականացնել Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակ (ԲՍԿՇ) Նախագծի համար, որը համահունչ է համապատասխան ԲՍՍ-ներին: 2. Պատրաստել և իրականացնել տեղանքին հատուկ Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանը (ԲՍԿՊ), ներառելով համապատասխան Շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատումը (ՇՍՄԱԳ), Մշակութային ժառանգության կառավարման պլանը (ՄԺԿՊ) և Բնապահպանական և սոցիալական Ուսումնասիրություն (ԲՍՈ), ինչպես սահմանված է ԲՍԿՇ-ում: Առաջարկվող գործողությունները, որոնք նկարագրված են ԲՍԿՇ-ում ներկայացված բացառումների ցանկում, չեն կարող ստանալ ֆինանսավորում Ծրագրի շրջանակներում: 3. Դիտարկել առաջարկվող գործողությունները՝ համաձայն Միջազգային ջրային ուղիների ծրագրի վերաբերյալ Բանկի գործառնական քաղաքականության (OP 7.50) պարբերության 7(ա) չափանիշների և ապահովել ԲՍԿՇ-ին համապատասխանությունը:	1.Հանրությանը ներկայացնել, ավարտել, և հրապարակել Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակը (ԲՍԿՇ) մինչև ուժի մեջ մտնելու ամսաթիվը, այնուհետև կիրառել ԲՍԿՇ-ն Ծրագրի իրականացման ողջ ընթացքում: 2. Նախքան շինարարական աշխատանքների իրականացումը, նախապատրաստել, ընդունել և ներառել տեղանքին հատուկ ԲՍ գործիքները, որպես համապատասխան գործունեության համար համապատասխան մրցութային փաստաթղթերի մաս: Վերջնականացնելուց հետո կիրառել համապատասխան դրույթները՝ Ծրագրի ամբողջ իրականացման ընթացքում:	ԾԻԳ
1.2	**ԿԱՊԱԼԱՌՈՒՆԵՐԻ Ուղղորդում**	Գնումների փաստաթղթերի և համապատասխան	ԾԻԳ

	Ավելացնել ԲՍՀՊ-ի համապատասխան մասերը, ներառելով նաև համապատասխան ԲՍ գնահատումները կամ պլանները, աշխատանքի կառավարման ընթացակարգերը և վարքագծի կանոնները, գնումների փաստաթղթերի և կապալառուների և վերահսկող ընկերությունների հետ պայմանագրերի ԲՍ բնութագրերում: Հավաստիանալ, որ կապալառուները և վերահսկող ընկերությունները իրականացնում են պահանջները, և որ նրանք իրենց ենթակապալառուներից պահանջում են համապատասխանել իրենց համապատասխան պայմանագրերի ԲՍ բնութագրերին: Բանկին տրամադրել կապալառուների/ենթակապալառուների և վերահսկող ընկերությունների հետ կնքված համապատասխան պայմանագրերի պատճենները:	պայմանագրերի պատրաստման շրջանակներում: Վերահսկել կապալառուներին Ծրագրի իրականացման ողջ ընթացքում:	
1.3	**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ** Իրականացնել խորհրդատվություններ, ուսումնասիրություններ, ներառյալ տեխնիկատնտեսական հիմնավորումները, կարողությունների զարգացումը, վերապատրաստումը և ցանկացած այլ տեխնիկական աջակցության գործողություններ Ծրագրի շրջանակներում, ի թիվս այլոց՝ Կլաստերների զարգացման Ծրագրի (ԿԶԾ), տարածքի կառավարման և/կամ գործառնության և պահպանման պլանների մշակում՝ համաձայն բանկի համար ընդունելի հանձնարարականների, որոնք համահունչ են ԲՍՍ-ների պահանջներին: Այնուհետև պատրաստել և վերջնականացնել այդ գործունեությունների արդյունքները համաձայն հանձնարարականների:	Ծրագրի իրականացման ողջ ընթացքում	ԾԻԳ, Էկոնոմիկայի նախարարություն(ԷՆ)
1.4	**ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ (ԱԻԱՖ)** 1. Համոզվել, որ Արտակարգ իրավիճակների արձագանքման բաղադրիչի (ԱԻԱԲ) ձեռնարկը ներառում է ԲՍ գնահատման և կառավարման միջոցառումների նկարագրությունը՝ համաձայն ԲՍՍ-ների, Ծրագրի 4-րդ մասի իրականացման համար: 2. Իրականացնել ԱԻԱԲ ձեռնարկի ԲՍ դրույթները:	1 ԱԻԱԲ ձեռնարկի պատրաստումը Բանկի կողմից ընդունելի ձևով և հանդիսանում է ֆինանսական միջոցների դուրսբերման պայման՝ վարկային համաձայնագրի 2-րդ հավելվածի [Ենթակա է որոշման] բաժնի մաս»: 2.ԱԻԱԲ ձեռնարկում նշված ժամանակային շրջանակներին համապատասխան	ԾԻԳ
1.5	**ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ** Ապահովել, որ հարակից հաստատությունում գործ ողությունները, եթե գնահատվել և պլանավորվել են, իրականացվում են սույն ԲՍՀՊ-ի և ԲՍՍ-ների կիրառելի պահանջներին համապատասխան, ներառյալ ԲՍԿՇ, ԲՍԿՊ, ԱԿՊ, ՏՇ, ՇԿՆՊ:	Ծրագրի իրականացման ողջ ընթացքում	ԾԻԳ

ԲՍՍ 2: «Աշխատանքի և աշխատանքային պայմաններ»			
2.1	**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ** Ծրագրի համար նախապատրաստել, ընդունել և իրականացնել Աշխատանքի կառավարման ընթացակարգեր (ԱԿԸ), ներառյալ ի թիվս այլոց, աշխատանքային պայմանների դրույթներ, աշխատողների հարաբերությունների կառավարման, առողջության և անվտանգության (ներառյալ անհատական պաշտպանիչ սարքավորումները, արտակարգ իրավիճակների պատրաստության և արձագանքման), վարքագծի կանոնները (ներառյալ՝ կապված ՍՇԲ-ի և ՍՈ-ի հետ), հարկադիր աշխատանքը, երեխաների աշխատանքը, Ծրագրի աշխատողների համար բողոքների մեխանիզմները և կիրառելի պահանջներ կապալառուների, ենթակապալառուների և վերահսկիչ ընկերությունների համար:	Խորհրդակցել, ամբողջականացնել և վերահանրայնացնել ԱԿԸ-ն մինչև մեկնարկի ամսաթիվը, այնուհետև կիրառել այն Ծրագրի իրականացման ողջ ընթացքում:	ԾԻԳ
2.2	**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ** 1. Պատրաստել, ընդունել և իրականացնել Ա&Ա կառավարման պլան՝ որպես տեղանքին հատուկ ԲՍԿՊ-ի մաս՝ գնահատելու և կառավարելու ենթածրագրի Ա&Ա ռիսկերն ու ազդեցությունները: 2. Պահանջել կապալառուներից և ենթակապալառուներից իրականացնել **առողջության եվ անվտանգության** կառավարման միջոցառումներ՝ համաձայն Ծրագրի Աշխատանքային կառավարման ընթացակարգի և դիտարկվող տեղանքին հատուկ ԲՍԿՊ-ի:	Նույն ժամանակահատվածը, ինչպես նշված է 1.1.2-ում տեղանքին բնորոշ ԲՍԿՊ-ի ընդունման և իրականացման համար: Պայմանագրի իրականացման ընթացքում:	ԾԻԳ
2.3	**ԲՈՂՈՔԻ ՄԵԽԱՆԻԶՄ ԾՐԱԳՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ** Ստեղծել և կիրառել բողոքների մեխանիզմ Ծրագրի աշխատողների համար, ինչպես նկարագրված է ԱԿԸ-ում և համահունչ է ԲՍՍ 2-ին:	Ստեղծել Բողոքների մեխանիզմ՝ նախքան Ծրագրում աշխատողներին ներգրավելը, և այնուհետև պահպանել ու կիրառել այն Ծրագրի իրականացման ողջ ընթացքում:	
ԲՍՍ 3: ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂՏՈՏՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ			
3.1	**ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ** Նախապատրաստել և իրականացնել Թափոնների կառավարման պլան (ԹԿՊ), որպես Ծրագրի ԲՍԿՊ-ի մաս՝ վտանգավոր և ոչ վտանգավոր թափոնները կառավարելու համար՝ համաձայն ԲՍՍ 3-ի:	Նույն ժամանակահատվածը, ինչը նշված է 1.1.2 կետում՝ համապատասխան ԲՍ գործիքի իրականացման համար:	ԾԻԳ
3.2	**ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ** Ներառել ռեսուրսների արդյունավետության և աղտոտվածության կանխարգելման ու	Նույն ժամանակահատվածը, ինչը նշված է 1.1.2 կետում՝ համապատասխան ԲՍ	ԾԻԳ

	կառավարման միջոցառումները որպես տեղանքին համապատասխան ԲՍԿՊ-ի մաս, որը պետք է պատրաստվի վերը նշված 1.1.2 կետին համապատասխան	գործիքի իրականացման համար:	
ԲՍՍ 4: Համայնքի առողջություն և անվտանգություն			
4.1	**ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ և ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ** Ներառել երթևեկության և ճանապարհային անվտանգության հետ կապված ռիսկերը կառավարելու միջոցներ, ներառյալ ծրագրի համար մատակարարվող ապրանքների, նյութերի և աշխատողների փոխադրումից բխող ռիսկերը, ինչպես պահանջվում է ըստ ԲՍԿՇ-ի և տեղանքին համապատասխան ԲՍԿՊ-ի, որը պետք է պատրաստվի 1.1 կետի համաձայն:	Նույն ժամանակահատվածը, ինչը նշված է 1.1.2 կետում՝ համապատասխան ԲՍ գործիքի իրականացման համար:	ԾԻԳ
4.2	**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ և ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ** Գնահատել և կառավարել Ծրագրի գործողություններից բխող հատուկ ռիսկերը և համայնքի վրա ազդեցությունները, ներառյալ, բայց ոչ սահմանափակվելով, երթևեկության կառավարում, Ծրագրի աշխատողների վարք, արտակարգ իրավիճակների արձագանքում և մեղմացման միջոցառումների ներառում ԲՍԿՊ-ում, որը պետք է պատրաստվի ԲՍԿՀ- ի համաձայն:	Նույն ժամանակահատվածը, ինչը նշված է 1.1.2 կետում՝ համապատասխան ԲՍ գործիքի իրականացման համար:	ԾԻԳ
4.3	**ՍԵՌԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ և ԲՌՆՈՒԹՅԱՆ / ՍԵՌԱԿԱՆ ՈՏՆՁԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԻՍԿԵՐ** Պատրաստել, ընդունել և իրականացնել ՍՇԲ և ՍՈ կանխարգելիչ գործողություններ՝ որպես աշխատանքային կառավարման ընթացակարգի մաս, ներառյալ, ի թիվս այլոց, Ծրագրում աշխատողների վարքի կանոնները և կիրառելի պահանջները կապալառուների, ենթակապալառուների և վերահսկող ընկերությունների համար և կառավարել ՍՇԲ/ՍՈ ռիսկերը Ծրագրի իրականացման ողջ ընթացքում:	Նախապատրաստել ՍՇԲ և ՍՈ գործողությունների պլանը մինչև ուժի մեջ մտնելու ամսաթիվը, և դրանից հետո իրականացնել ՍՇԲ և ՍՈ գործողությունները Ծրագրի իրականացման ողջ ընթացքում:	ԾԻԳ
4.4	**ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ** Գնահատել և իրականացնել միջոցառումներ՝ Ծրագրի անվտանգության ռիսկերը կառավարելու համար, այդ թվում՝ անվտանգության անձնակազմի (թիկնապահների) ներգրավման ռիսկերը՝ Ծրագրի աշխատողների, տարածքների, ռեսուրսների և գործունեության պահպանման համար [որոշել պլանները կամ ներառել հղում, որտեղ նման միջոցառումները նշվում են, ըստ անհրաժեշտության, օրինակ՝ ինչպես նշվում է ԲՍԿՊ-ում կամ Անվտանգության կառավարման պլանում]:	Նույն ժամկետը, ինչ վերը նշված 1.1.2 Գործողության համար՝ համապատասխան ԲՍ գործիքների ընդունման և իրականացման համար: Անվտանգության անձնակազմ ներգրավելու ռիսկերը պետք է գնահատվեն ցանկացած դեպքում նախքան անվտանգության անձնակազմ ներգրավելը և հետագայում Ծրագրի իրականացման ողջ	ԾԻԳ

		ժամանակահատվածում:	
ԲՍՍ 5: ՀՈՂԵՐԻ Ձեռքբերում, ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ ԵՎ ՀԱՐԿԱԴԻՐ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՈՒՄ.			
5.1	**ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿ** 1. Պատրաստել և իրականացնել Ծրագրի համար Տարաբնակեցման Շրջանակ (ՏՇ), որը համապատասխանում է ԲՍՍ5-ին: 2. Ծրագրի շրջանակներում նախատեսված յուրաքանչյուր ՏՊ-ի և/կամ կենսամակարդակի վերականգնման պլանի գործունեության համար պատրաստել և իրականացնել Տարաբնակեցման պլան (ՏՊ) և/կամ Կենսամակարդակի բարելավման պլան, ինչպես սահմանված է տարաբնակեցման շրջանակում և համահունչ է ԲՍՍ5-ին:	1. Հանրայնացնել, ավարտել և վերահանրայնացնել ՏՇ-ն մինչև Ծրագրի ուժի մեջ մտնելը, որից հետո կիրառել ՏՇ-ն Ծրագրի իրականացման ողջ ընթացքում: 2. Նախքան նախատեսվող աշխատանքների մեկնարկը ընդունել և այնուհետև իրականացնել համապատասխան տարաբնակեցման պլան կամ տեղական ներդրումային ծրագիր, երաշխավորելով, որ ամբողջական փոխհատուցում է տրամադրվում նախքան հողին և այլ ռեսուրսներին տիրանալը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ տեղահանված անձինք կվերաբնակեցվեն և կտրամադրվեն վերաբնակեցման նպաստներ:	ԾԻԳ, ԷՆ
ԲՍՍ 6: ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՎ ԿԵՆԴԱՆԻ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ			
6.1	**ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ** Գնահատել և կառավարել կենսաբազմազանության հետ կապված ռիսկերն ու ազդեցությունները՝ համաձայն ԲՍԿՇ-ի, ներառյալ Կենսաբազմազանության կառավարման պլանի (ԿԿՊ) պատրաստումը, որտեղ բացահայտված են կենսաբազմազանության համար էական ռիսկերը և բացասական ազդեցությունները՝ որպես ԲՍՍ6-ին համահունչ գործող 1.1.2-ի մաս:	Նույն ժամանակահատվածը ինչ նշված է 1.1.2-ում համապապատասխան ԲՍ գործիքների ընդունման և իրականացման համար:	ԾԻԳ
ԲՍՍ 7: ՀՆԷԱԲՆԱԿ ԺՈՂՈՎՈՒՐԴ/ ԵՆԹԱՍԱՀԱՐԱՅԻՆ ԱՖՐԻԿԱՅԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆԱՊԱՀՈՎ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ			
7.1	Այս ստանդարտը Ծրագրին չի վերաբերում		
ԲՍՍ 8: ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ			
8.1	**ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ և ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**	1.Նույն ժամանակահատվածը	ԾԻԳ

	1. Նախապատրաստել և իրականացնել Մշակութային ժառանգության կառավարման պլան (ՄԺԿՊ) որպես տեղանքին հատուկ ԲՍԿՊ-ի մաս՝ Ծրագրի համար պատրաստված ԲՍԿՇ-ի ուղեցույցներին և ԲՍՍ8-ին համապատասխան: 2. Պատրաստել և իրականացնել Դվինի հնավայրի համար առանձին ՄԺԿՊ՝ համաձայն ԲՍԿՇ-ի և ԲՍՍ8-ի:	ինչ նշված է 1.1.2-ում համապատասխան ԲՍ գործիքների ընդունման և իրականացման համար: 2. Նախքան շինարարական աշխատանքների իրականացումը պատրաստել, ընդունել և ներառել ՄԺԿՊ-ը որպես մրցութային փաստաթղթի մաս: Վերջնական տեսքի բերելուց հետո կիրառեք ՄԺԿՊ-ը գործունեության իրականացման ողջ ընթացքում:	
8.2	**ՊԱՏԱՀԱԿԱՆ ԳՏԱԾՈՆԵՐ** Նկարագրել և կիրառել պատահական գտածոների ընթացակարգերը որպես ԲՍԿՊ-ի (տեղանքին հատուկ) մաս՝ Ծրագրի շրջանակներում պատրաստված ԲՍԿՇ-ի ուղեցույցներին համապատասխան:	Նկարագրել ԲՍԿՇ-ում պատահական գտածոներ գտնելու ընթացակարգերը: Իրականացնել ընթացակարգերը Ծրագրի իրականացման ողջ ընթացքում:	ԾԻԳ
8.3	**ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՎԱՅՐԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՕԳՈՒՏՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ և ԲԱԽՇՈՒՄ** Գնահատել կլաստերներում զբոսաշրջության զարգացման ազդեցությունը մշակութային վայրերի բարելավումներից ստացված առավելությունների հավասարաչափ հասանելիություն և բաշխում և մշակել ռազմավարություններ՝ բացասական ազդեցությունները մեղմելու համար՝ որպես ԿՋԾ-ների մաս:	Նույն ժամանակացույցը, ինչ որ ԿՋԾ-ների պատրաստման և վերջնականացման համար	ԾԻԳ, ԷՆ
ԲՍՍ 9: ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՆՈՐԴՆԵՐ			
9.1	**Այս ստանդարտը Ծրագրին չի վերաբերում**		
ԲՍՍ 10: ՇԱՀԱԿԻՐ ԿՈՂՄԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ և ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ			
10.1	**ՇԱՀԱԿԻՐՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՊԼԱՆ** Ծրագրի համար ընդունել և իրականացնել Շահակիրների ներգրավման պլան (ՇՆՊ), համահունչ ԲՍՍ10-ին, ապահովել, որ շահակիր կողմերին ժամանակին տրամադրվի համապատասխան, հասկանալի և մատչելի տեղեկատվություն ՝ ըստ հավուր պատշաճի նրանց հետ խորհրդակցելով, զերծ լինելով շահարկումից, միջամտությունից, հարկադրանքից, խտրականությունից և ահաբեկումից:	Քննարկել ՇՆՊ-ի նախագիծը, ընդունել և հրապարակել մինչև ուժի մեջ մտնելու ամսաթիվը, այնուհետև կիրառել այն Ծրագրի իրականացման ողջ ընթացքում:	ԾԻԳ, ԷՆ
10.2	**ԾՐԱԳՐԻ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ և ԲՈՂՈՔՆԵՐԻ ՀԱՍՑԵԱԳՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ**	Ընդունել ՀԿԲՀՄ-ն նախքան	ԾԻԳ

	Ձևավորել, հանրայնացնել, պահպանել և կիրառել հասանելի բողոքների մեխանիզմ՝ (ՀԿԲՀՄ) Ծրագրի հետ կապված խնդիրների եւ բողոքների լուծումը ստանալու եւ հեշտացնելու համար՝ արագ, արդյունավետ և թափանցիկ ձևով, որը հասանելի է Ծրագրի ազդակիր կողմերին մշակութային առումով համապատասխան և հասանելի է Ծրագրի ազդակիր կողմերին՝ անվճար և առանց փոխհատուցման, ներառյալ խնդիրները և բողոքները, որոնք ԲՍՍ10-ին համահունչ ներկայացված են անանուն կերպով: Բողոքների մեխանիզմը պետք է կարգավորված լինի ՍՇԲ և ՍՈ `բողոքների լուծման, գրանցման և հեշտացման համար, այդ թվում՝ տուժածներին համապատասխան գենդերային բռնության ենթարկվածներ ծառայություններ տրամադրելու միջոցով՝ պահպանելով գաղտնիությունը:	Ծրագրի ուժի մեջ մտնելը, այնուհետև կիրառել այն ծրագրի իրականացման ընթացքում:	
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐ			
Հետևյալ գործողությունները իրականացման պատրաստականության ցուցիչներն են - Ա, Կազմակերպչական կառուցվածք - Բ, Կարողությունների զարգացման ծրագիր - 1.1, Բնապահպանական և սոցիալական գնահատումներ և/կամ պլաններ - 2.1, Աշխատանքային կառավարման ընթացակարգ - 5.1, ՏՇ - 10.1, ՇՆՊ - 10.2, ՀԿԲՀՄ			